ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 298-18
21 մայիսի, 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի՝ պարոն Նալբանդյան,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2018 թվականի մայիսի 16-ին կայացված վեցերորդ արտահերթ նիստի ժամանակ ընդունված N 38-ից N 40 որոշումները:

Առդիր՝ 19 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան
հեռ. 060-80-00-70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2018 թվական, N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 16-ի վեցերորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ		
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
Ա. ԴԱՎԹՅԱՆ		
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., մայիսի 16,
Լոռու մարզ, գ. Օձուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 16-ի N 38-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2018 թվական, N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2019 թվականի բնապահպանական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ		
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
Ա. ԴԱՎԹՅԱՆ		
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., մայիսի 16,
Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔ

Հ Ա Յ Տ 2019

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 05.06.01

(ՕՁՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԻՎ 2,3,4,5,6,6/2ՆՐԲ.,9,10,11,18, ԵՎ ՀԱԳՎԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1,2,3,4,5 ՓՈՂՈՑՆԵՐԻ /ՄԱՍՆԱԿԻ/ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՕՁՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1,3,6,7,8, ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԵԼԱՎԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ, ՍՆՈՒՆԴ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Հաստատված է Օձուն համայնքի ավագանու 2018թ. մայիսի 16-ի թիվ 39-Ա որոշմամբ

2 0 1 8 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը 3
Ծրագրի ընդհանուր նպատակը 5
Ծրագրի հիմնավորումը 6
Հավելված 1 10
Հավելված 2 11
Հավելված 3----------12

Համայնքի նկարագրությունը

<<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ Օձուն, Այգեհատ, Արդվի, Արևաձագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի և Մղարթ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Օձուն համայնքը:

Համայնքի կենտրոնն է հանդիսանում Օձուն գյուղը:

Գյուղը գտնվում է Դեբեդի կիրճի ձախափնյա բարձրադիր սարավանդի վրա, Ալավերդի քաղաքից 8 կմ հարավ-արևմուտք: Զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլաբուծությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Ունի երկու միջնակարգ դպրոցներ, երկու մանկապարտեզ, արվեստի դպրոց, մշակույթի տուն, գրադարան, կապի բաժանմունք, բուժ ամբուլատորիա, շրջանային հրշեջ կայան: Օձուն անունը հիշատակվում է ութերորդ դարից: Գյուղում կան բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ:

Օձունը հանրապետության մեծ գյուղերից է, իսկ Լոռու մարզի ամենամեծ գյուղը: Այն գտնվում է Երևանից 180 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից 50 կմ հեռավորության վրա՝ հանրապետության հյուսիսային մասում: Օձուն համայնքը գտնվում է Հ-35՝ Մ-6 – Օձուն - Արևաձագ – Հ 24 հանրապետական նշանակության ճանապարհի վրա, Մ-6՝ Վանաձոր (Մ-3 հատման

կետ) Ալավերդի - Վրաստանի սահմանի միջպետական ավտոճանապարհից 5 կմ հեռավորության վրա: Գյուղի մակերեսը 7879,72 հա է, որից անտառները՝ 1893հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 5404 հա, այդ թվում. Համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի մեջ: Օձուն համայնքի վարչական տարածքի մեջ մտնում էր նաև Ամոջ գյուղը: Օձունն աչքի է ընկնում բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000-1100 մ ծովի մակարդակից: Ձմռան ամենացուրտ ամիսը հունվարն է, հունվարյան միջին ջերմաստիճանը -2,00C: Ամռան ամենատաք ամիսը հուլիսն է, միջին ջերմաստիճանը 19,90C: Տարեկան միջին ջերմաստիճանը 9,30C, մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 553 մմ:

Հագվի գյուղը գտնվում է հանրապետության հյուսիս-արեւելքում, Ալավերդի քաղաքից 15 կմ հեռավորության վրա: Չնայած գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, գյուղում կա փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է 12-րդ դարում:

Գյուղը գտնվում ՝ ծովի մակերեւույթից 1200 մ բարձրության վրա: Գյուղի կլիման բարեխառն է, ձմեռը մեղմ, ամառը՝ զով: Գյուղի հողատարածությունները ամբողջովին զրկված են ոռոգման ջրից, որի պատճառով հնարավոր չէ լիարժեք կազմակերպել գյուղմթերքների արտադրություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի եւ կարտոֆիլի արտադրությամբ: Հողի .բերքատվությունը կախված է տարվա եղանակներից: Վարելահողերը մեծամասամբ դրված են անասնակերի տակ: Անասնակեր ներմուծվում է նաև հարևան գյուղերից:

Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, ձու, մեղր, բուրդ:

Ծրագրի ընդհանուր նպատակը

Ծրագիրը նպատակ է հետապնդում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից սուբվենցիաների տեսքով Օձուն համայնքի Օձուն և Հագվի բնակավայրերին կատարվող մասհանումների գումարները օգտագործել նպատակային և որոշակի չափով լուծել համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրները: Որպես բնապահպանական ծրագիր նախատեսվում է փողոցների լուսավորության համակարգերի կառուցումը՝ էներգախնայող լամպերով և սելավատարների մաքրման աշխատանքները: Առողջապահությանը միտված ծրագրով նախատեսվում է ձեռք բերել լրացուցիչ սնունդ նախակրթարանների համար:

Ծրագիրը ներառում է.

1. Օձուն համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանման ու վերականգնման միջոցառումներ:
2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես «Արմենիա Քափր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործունեությամբ:

Ծրագրի հիմնավորումը

Օձուն համայնքի Օձուն և Հագվի բնակավայրերի անտառային, ջրային և օդային ավազանների վրա Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական ազդեցությունը արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ օդային ավազան ծծումբ պարունակող գազերի և փոշու արտանետումները և տարբեր արտադրամասերից վտանգավոր նյութերի արտահոսքը, որոնք, հատկապես խոնավ օրերին, տեղաշարժվում են դեպի Օձունի հարթավայր և ամպի տեսքով մնում երկար ժամանակ՝ առաջին հերթին վնաս հասցնելով մատաղ սերնդի առողջությանը և բնականոն աճին: Օձուն համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի ու բնակչության առողջության պահպանման ու վերականգնման միջոցառումները դառնում են խիստ հրատապ: Պետք է նշել , որ <<Վալլեքս>> խմբի <<Թեղուտ >> ՓԲԸ ընկերությունը շուրջ 30 հա անտառատնկման և խնամքի աշխատանքներ է կատարել Օձուն բնակավայրում նախորդ 5 տարիների ընթացքում:

Ծրագիր 1

Փողոցների լուսավորության համակարգերի կառուցում

Համայնքում ենթակառուցվածքների զարգացումը , համայնքի բարեկարգումը դարձել է օրվա հրամայական պահանջ և գրավական բնակչության կենսամակարդակի բարձրացման և տնտեսության զարգացման համար՝ հատկապես տուրիզմի: Ցավոք ոչ համայնքի սեփական եկամուտները և ոչ էլ պետական բյուջեից համահարթեցման նպատակով տրամադրվող դրամաշնորհները <<թույլ չեն տալիս>> իրականացնել վերոհիշյալ ծրագրերը: Համայնքը ներդրումների համար գրավիչ դարձնելու նպատակով անհրաժեշտ են մի շարք միջոցոռումների իրականացում ՝ համայնքի փողոցների հիմնանորոգում, լուսավորության համակարգերի կառուցում, կոյուղագծերի կառուցում և այլն, որոնք ունեն նաև բնապահպանական նշանակություն: Ներկայումս Օձուն խոշորացված համայնքի փողոցների միայն 20 տոկոսն է գտնվում բարեկարգ վիճակում , լուսավորված

փողոցների տեսակարար կշիռը նույնպես չի անցնում 20 տոկոսից: 2011թ. դրությամբ նախկին Օձուն համայնքը ունեցել է 20 փողոցային լուսակիրներ, որոնք նախատեսված են եղել հանրապետական նշանակության ճանապարհի երկարությամբ: 2013թ. Կառավարության համայնքների համաչափ զարգացման հրատապ ծրագրով իրականացվել է 13 220 հազար դրամի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ: 2017-ին. համայնքին հատկացված բնապահպանական սուբվենցիայի միջոցով սկիզբ է դրվել համայնքում էներգաարդյունավետ լուսավորության համակարգի ստեղծմանը: Տեղադրվել են 71 լուսակիրներ ՝ էներգախնայող լամպերով Օձուն և Ամոջ բնակավայրում:

2019թ բնապահպանական հատկացումներով նախատեսվում է կատարել ևս 22 076 840 դրամ նախահաշվային արժեքով լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ՝ <<led>> տեսակի էներգախնայող լամպերով: Նախագծի բնապահպանական նշանակությունը պայմանավորված է երկրագնդի գլոբալ տաքացման դեմ ուղղված միջոցառումներին համայնքի հնարավոր դերակատարությանը և նաև էներգախնայողությանը՝ միաժամանակ ունենալով լուսավորված փողոցներ:

Ծրագիր 2

Որպես բնապահպանական միջոցառում շատ կարևոր են նաև սելավատարների ժամանակին և անհրաժեշտ ծավալով մաքրման աշխատանքները: Համայնքի սելավատարների ներկայիս վիճակը խիստ մտահոգիչ է թե բնապահպանական, թե առողջապահական նկատառումներով: Հատկապես անձրևային եղանակներին, հեղեղումներ են առաջանում այն փողոցներում, որտեղ սելավատարների մաքրմնան խնդիր կա, շարքից դուս են գալիս փողոցները, հեղեղվում են այգիները, լուրջ վտանգ հարուցելով շրջակա միջավայրին: Համայնքի միջոցներով պարբերաբար կատարվում են սելավատարների մաքրման աշխատանքներ, բայց միջոցների սղության պատճառով , այդ աշխատանքները մեղմ ասած բավարար չեն: Նախատեսվում է 2019թ.-ի բնապահպանական սուբվենցիայի միջոցներով կատարել մոտ 4,5 մլն դրամի սելավատարների մաքրման աշխատանքներ:

Ծրագիր 3

Օձուն համայնքում Օձուն բնակավայրում գործում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որտեղ հաճախում են 150-ից ավելի մանուկներ:

Հաշվի առնելով բնակչության կենսամակարդակը, գործազրկության բարձր ցուցանիշը՝նախակրթարաններն անվճար են և պահպանվում են համայնքի միջոցների հաշվին:Նախակրթարանների խաղասենյակները, հանգստի սենյակները և սանհանգույցները 2010-2018թթ.-ին վերանորոգվել են համայնքի միջոցներով, 2011թ.-ին բնապահպանական ծրագրրով տեղադրվել են լոկալ ջեռուցման համակարգեր: 2012-2018թթ կատարվել են ընթացիկ և կոսմետիկ նորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել գույք, տեխնիկա, խոհանոցային սպասք , մահճակալներ: 2017թ բնապահպանական սուբվենցիայի միջոցներով, բացի սննդից, ձեռք են բերվել մարզական գույք և անկողնային պարագաներ:

Նախորդ տարիներին համայնքապետարանի կողմից իրականացված համալիր ծրագրերի արդյունքում նախակրթարաններ հաճախողների թիվը հասել է 150 երեխայի, ինչը համայնքում ստացել է դրական արձագանք: Արդյունքում ավելի շատ թվով անապահով ընտանիքների երեխաներ են կարողանում հաճախել մանկապարտեզ, որոնք ապահովված են որակյալ սննդով նաև ի շնորհիվ համայնքին հատկացվող բնապահպանական սուբվենցիաների: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսում ենք համայնքի 2 մանկապարտեզների՝ շուրջ 150 սաներին ապահովել լրացուցիչ սննդով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է **1,8 մլն դրամ:**

Լրացուցիչ սնունդ նախակրթարանների սաների համար

Ծրագրի նախահաշիվ

N	Սննդատեսակի անվանումը	Չափի միավոր	Մեկ տարվա քանակը	Գինը դրամ	Գումար
1	Կաթ պաստերիզացված	l	2000	420	840000
2	Տավարի միս փափուկ	կգ	200	3800	760000
22	Հավի միս	կգ	160	1550	248000
	ԸՆԴԱՄԵՆԸ				1848000

Հավելված N1

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր - N:1

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ և ՀԱԳՎԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ	Համայնքի բնակավայրերի փողոցների լուսավորություն:	Համայնքում լուսավորության էներգաարդյունավետ համակարգի շարունակական ներդրում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Համայնքի Օձուն և Հագվի բնակավայրերում կկառուցվեն գիշերային լուսավորության համակարգեր, կտեղադրվեն 147 լուսակիրներ	Համայնքի Օձուն Հագվի բնակավայրերի ևս 15 փողոցներ կունենան գիշերային լուսավորության համակարգեր
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Օձուն համայնքի Օձուն և Հագվի բնակավայրերի փողոցների գիշերային լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ: /Նախահաշվային արժեքը 22 .5մլն դրամ/: Շինարարական աշխատանքների տևողությունը՝ 7 ամիս:	Օձուն բնակավայրի 2,3,4,5,6,6/2 նրբ.,9,10,11,18 և Հագվի բնակավայրի 1,2,3,4,5 փողոցների/ մասնակի / գիշերային լուսավորության համակարգերի կառուցում: Շահագործման հանձնումը 2019թ, նոյեմբեր ամսին:

Հավելված N2

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր - N:2

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՍԵԼԱՎԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ	Համայնքի բնակավայրերի ենթակառուցվածքների բարելավում , շրջակա միջավայրի պաշտպանություն	Համայնքի փողոցների պահպանում, շրջակա միջավայրի պահպանում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Համայնքի Օձուն բնակա-վայրում կկատարվեն փողոցների սելավատարների մաքրման աշխատանքներ	Համայնքի Օձուն բնկավայրի 5 փողոցների սելավա-տարների մաքրում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵ-ՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆ-ՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Օձուն համայնքի Օձուն բնակավայրի փողոցների սելավատարների մաքրում /Նախահաշվային արժեքը 4,5 մլն դրամ/: Շինարարական աշխատանքների տևողությունը՝ 4 ամիս:	Օձուն բնակավայրի թիվ 1,3,6,7,8 փողոցների սելավատարների մաքրման աշխատանքներ: Շահագործման հանձնումը 2019թ, հոկտեմբեր ամսին:

Հավելված N3

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր - N:2

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ	Համայնքի բնակչության, հատկապես երեխաների առողջության պահպանման և ամրապնդման ապահովում	Համայնքի երեխաների առողջության, բնականոն աճի ապահովում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Երեխաների առողջության պահպանման և ամրապնդման ապահովում	Համայնքի 2 մանկապարտեզների շուրջ 150 սաների առողջության ամրապնդման ապահովում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Ծրագրով նախատեսվում է համայնքի մանկապարտեզներին հատկացնել լրացուցիչ սնունդ (նախահաշվային արժեքը 1,8մլն դրամ): Տևողությունը 12 ամիս:	Համայնքի 150 երեխաների առողջության պահպանման և ամրապնդման միջոցառումների իրականացում 2019 թվականի ընթացքում և հետագա տարիներին:

Օձուն համայնքի ղեկավար Ա. Ժ. Տիտանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2018 թվական, N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 186-Ն հրամանի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կադաստրային քարտեզում և հատակագծերում հայտնաբերված անշարժ գույքի միավորների սխալների ուղղումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ		
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
Ա. ԴԱՎԹՅԱՆ		
Մ. ԽԵՋՈՒՄՅԱՆ		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., մայիսի 16,
Լոռու մարզ, գ. Օձուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 16-ի N 40-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ

1. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0438-0087** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Աիդա Մանթաշյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

2. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0502-0012** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Ավետիք Թամազյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

3. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0014** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Անահիտ Պեպանյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

4. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0015** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

5. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0018** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

6. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0021** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

7. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0026** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Արտակ Նալբանդյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

8. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0027** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Աշոտ Տտանյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

9. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0508-0030** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացի Աշոտ Տիտանյանին որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

10. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0514-0002** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացուն որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

11. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0514-0003** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

12. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0517-0004** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

13. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0517-0003** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

14. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0517-0005** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

15. Օձուն համայնքի փադաստրային քարտեզի **06-112-0518-0009** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության պաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

16. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0518-0010** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

17. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0518-0013** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

18. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0518-0014** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

19. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0518-0016** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

20. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0518-0022** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացուի Մուկուչ Տիտանյան որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

21. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0603-0002** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

22. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0603-0002** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից.

23. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի **06-112-0603-0003** ծածկագրով բնակավայրերին նպատակային նշանակության փաստացի առկա սահմանազատված հողամասը Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ անճշտության հետևանքով փոխանցվել է քաղաքացու (անհայտ) որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս, սակայն իրականում այն հանդիսանում է համայնքային սեփականության և առ այսօր տիրապետվում և օգտագործվում է Օձուն համայնքի կողմից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ